

ՆՈՐԱՐԱՆԻՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսի քաղաքում են տպագրւում խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік»
Գրաս. Тифлис, Редакция «Мелік»
Տէլեֆոն № 253.

Երկրագործութիւնը բաց է առաջատար 10—2 ժամ
(շաբաթի կիրակի և տոն օրերին).

Երկրագործութիւնը ընդունւում է ամէն լիցւումով.

Երկրագործութիւնը են համար վճարում են
իւրաքանչիւր տարեկան 10 կոպէկ.
Տէլեֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՍՐՈՒՆԵՐ

ԲԱՆԱԿԱՆ ՏԵՄԱԿԱՆ

Բաղադրական տեսութիւն. Ներքին ՏԵՄԱԿԱՆ
ՏԵՄԱԿԱՆ. Իրերի ներկայ գրութիւնը Բաղադրական
և նախադասութիւնը հրապարակւում են իւրաքանչիւր
ՄԱՍԻՆ. ՏԵՄԱԿԱՆ. Մէջինիցով և Բաժնի
գեղարուած սիֆիլիսը պատճառեց մահուան.
Արտաքին յարաբեր. ՆԱԽԱՐԱՐՈՒՄ. Մանրա-
նկար. ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ. ՅԱՅԱՍՏԱՆԻՆԵՐԻՆԵՐ.
ՆԵՐ. ԲԱՆԱԿԱՆ ՏԵՄԱԿԱՆ. Հայ կեանքին

ԲԱՆԱԿԱՆ ՏԵՄԱԿԱՆ

Հոսով պապ ընտրւեց կարգինալ Սարգս
և աթոր, յուլիսի 27-ին, պէտք է կատար-
վի նրա օծման տօնը Վատիկանում:

Սարգսի ընտրութիւնը թէև անսպասե-
լի էր, բայց հաւանականութեան շրջա-
նից դուրս չէր: Պապերի ընտրութեան
պատմութիւնը տալիս է մեզ արդմանքի
օրինակներ, երբ ընտրողները չեն կարո-
ղացել համաձայնութիւն կայացնել առաջ-
նախագիծ թեկնածուների վերաբերութեամբ
և այն ժամանակ կանգ են առել երկրոր-
դական թեկնածուներին վրա: Ահա այդ
կարգինալ էր պատկանում և կարգինալ Սար-
գսի անունը ուրիշ նոյնատեսակ անուննե-
րի հետ, որոնք ինքն ըստ ինքեան պատ-
կանելի անուններ էին, բայց այնքան հըռ-
չակիւմ չէին և նախնացած էին աւելի
յայտնի անունների առաջ: Սարգս, ու-
ն 68 տարեկան մի անձնաւորութիւն է և
յարգանք էր վայելում կարգինալների շըր-
ջանում: Այժմ դեռ որոշակի ոչինչ չէ կա-
րելի աւել նրա իրեն պապի սեփական
վարչական ծրագրի մասին:

Պապի ընտրութեան վերաբերութեամբ
Եւրոպական պետութիւնները աշխատեցին

չեղորդիք բռնել և իրանց կողմից ա-
ռանձին ձևովները դործ չը դնել: Պապի
անձնաւորութեան դէմ չեղան առարկու-
թիւններ ոչ մի տեղից և ամենքը սպա-
սում են ապագայ դէպքերին և եղբու-
թիւններին:

Ներկայումս բաւական անախորժ գրու-
թեան մէջ է Իտալիան, որը չը գիտէ թէ
ինչ դիրք բռնէ Վատիկանի վերաբերեալ
ընթացիկ գործերի մէջ: Պապական և Թա-
ղաւորական զահերի մէջ, կամ Վատիկանի
և Կիրիկիայի մէջ մօտ երեք տասնեակ
տարի է, ինչ որ տիրում է ստանութիւն և
նոյն իսկ թշնամութիւն: Վատիկանը, թէև
իրապէս կորցրել է իր աշխարհական իշ-
խանութիւնը, բայց նա դեռ չէ հաշտուել
այդ վիճակի հետ և շարունակում է նայել
խաղաղապէս արքունիքի վրա, իրեն յախըշ-
տակողների վրա պապութեան վերաբե-
րեալ:

Այսպէս թէ այնպէս պապական զահի
շուրջը տիրող առանձին հետաքրքրու-
թիւնը, որ յարուցւած էր Լեոն XIII-ի
հիւանդութեամբ և մահով, այլ և նոր
հիւանդութեամբ Սարգսի ընտրութեան հարցով,
X օծումից յետոյ կը թուլանայ և կը մտնէ
իր սովորական շրջանակի մէջ:

Մի ուրիշ հարց, որ այս տարվայ ամե-
նախորդ և ամենահին հարցերից մէկն է,
այն է թուրքա-մակեդոնական հարցը, ու-
րից սկսել է դէպի ինքը դրաւել եւրոպա-
կան հասարակութեան ուշադրութիւնը:
Մակեդոնիան նորից սկսել է յուզվել և
նորից ապստամբական խմբեր երևում են
երկրի այս և այն կողմում: Թիւրքաց կա-
ռավարութիւնը շտապով գործեր է ու-
ղարկում յուզված անդերի և երկրի կայ,

որ ապստամբութեան ճնշելը կը կատարվի
չափազանց եռանդուն կերպով և կը վը-
նասէ ազգայնականութեանը ընդարձակ տա-
րածութեան վրա:

Ինքը Բալգարիան գտնվում է ներքին
երկպառակութիւնների մէջ: Բալգարական
իշխան Ֆերդինանդի և Ժողովրդական ներ-
կայացուցիչների մէջ ծագել են խոշոր ան-
համաձայնութիւններ: Ժողովուրդը չէ հա-
մարում իշխանի և ներկայ մինիստրու-
թեան արած այն վերջին կարգադրու-
թիւններին, որոնք վերաբերում են պե-
տական պաշտօնեաներին: Ներկայումս գոր-
ծող մինիստրութիւնը շատ յամառ է իր
դրաժանեութեան մէջ և չէ ցանկանում
զիջել Ժողովրդական ներկայացուցիչներին:
Այդպիսով դժգոհութիւնը Ժողովրդի մէջ
օրէցօր աւելանում է:

Իսկ Մակեդոնիան միւս կողմից չէ ու-
ղում հանգստանալ և հաշտվել այն դա-
շախորի հետ, որ նրա ապստամբական
ծրագիրը պէտք է Ֆիայ առանց գործա-
դրութեան և համապատասխան հետևանք-
ների:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄԱԿԱՆ

ԻՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻՆՈՒՄ ԵՒ
ՆԱԽԱՐԱՐՈՒՄ ՀՐԴԵՂԸ

Արդիւնաբերական վայրերում իրերը կա-
մայ-կամայ իրանց սովորական ընթացքի մէջ
են մտնում: Վերջին թղթակցութիւններից
յետոյ հրդեհներ Բալխանիում այլ ևս տեղի
չեն ունենում: Զորքը, որով լցված են հան-
քերը, այլ ևս անելիք չունի և անգործութեան
է մատնվել: Ամսի 20-ից սկսած Բալխանի

հանքերում տեղ տեղ ակտիւն աշխատութիւն-
ները և այդ օրվանից օրէցօր սկսում էին աշ-
խատել միւս հանքերի գործաւորները, և այժմ
համարեա ամբողջ Բալխանիի նախաձեռնե-
րում սկսվել է գործունէութիւնը տեղաւային
արագութեամբ:

Այդ գործունէութիւնը առ այժմ նախապատ-
րաստական ընաւորութիւն ունի, որովհետեւ
դեռ դեռաված են այս վերջին դէպքերի առի-
թով առաջացած կտորած ու փչացածները նա-
րագելով, կարկատելով, կարգի բերելով, այդ-
ված վիճակների փոխարէն նորերը կանգնեց-
նելով, նոր մեքենաներ և գործիքներ կրելով
հանքերը: Օգտվելով առիթից, մի քանի ապ-
րանք, օրինակ, փայտեղէն անասորի չափե-
րով թանգացել են: Թանգացել է նաև այս-
պէս կոչված ЛОВИЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ
քրէհը, այսինքն այն գործիքների, որոնք
յայտնի ֆիրմաներ պահում են և քրէհով են
տալիս նախադրեալները: Այս կամ
այն հերում ընկած գործիք հանելու համար,
որովհետեւ հանքերը խառնակութիւնների
ժամանակ կանգնեցնելիս մեծ մասամբ հորում
էին թողնում քանդող կամ քաղող գործիքները:
Այս բոլոր իրարանցման, աշխատանքի տեւ-
դի մէջ խորխորաբար կանգնած է միայն Նո-
բէլի ֆիրման, որը բնաւ չէ շտապում վերա-
կանգնել գործերը հանքերում և կատարել
ստանաւորութեամբ է վերաբերվում իր շըր-
ջը տեղի ունեցած իրողութեանը, երեւի բան-
ւորներին համակցելու համար, թէ իրանց ա-
րածը անմտութիւն էր, որից իսկի նեղվել չեն
կարող Նոբէլները: Այդ ֆիրման հանգիստ
սրտով արձակում է իր ըմբոստ գործաւորնե-
րին և նրանց տեղը նորերին վարձելիս առա-
ջարկում է նախկին իր տուած վարձից 100%
էլ պակաս:

Կիմանք թէ ով էր այդ հերոսահին:
Ուր կերթար այդ կինը, ինչ ընելու կեր-
թար: Մշակին ընթերցողները վերև առած
տեղեկութիւններէս դիւրութեամբ կը գուշա-
կեն թէ Տուրկին իր վրիժառու ծագքերի գոր-
ծադրութեանը կը հետամտի, բայց հատուկ
ընթերցողները իրենց հետաքրքրութիւնը գո-
հացնելու համար պէտք է քիչ մը աւելի համ-
բերող ըլլան:

Տուրկինի նպատակակէտը, ուստի և վէպին
նիւթը երկրորդ գլխուն մէջ կը պարզուին:
Տուրկին նախարարութեան տիրուհին Արմա-
ւիրի դղեակը դեռ սուրիշ երեք զուակ կը թո-
ղու: Մէկը՝ դեռատի աղջիկ մը, Արփենիկը:
միւրը՝ տասնինգ տարեկան մանչ մը, Վաչ-
տակը, և երրորդը՝ չորս տարու Յոլակը:

Առաւել է, արուր զարթնում: Ահա քանի մը
օր է խեղճ աղջնեկներուն մայրը իր կեթնիկ
մանկիկովը հեռացել է, առանց բան մը ընե-
լու: Ուր գացած է, ինչ եղած է: Զաւակները
ինչպէս սրտաբեկ չըլլան: Եւ արդէն քիչ են
աղէտները, որ զիբեք դժբաղդ ըրած են:
Հայրենիկ չարաչար սպաննուած, երկայր թա-
րայներին սպաննուած, հինգ եղբայր թա-
փառացած կորստաւաններ, և ղղեակը աւեր ու
քանդ:

Արփենիկ ալ կեանքին դիմանալու ուժ չը գտար
իր մէջ. անձնասպանութեան որոշում կուտայ:
Նախկին մը, իր հրամանովը, հեղուկ թոյն մը
կը պատրաստէ և իրեն կը բերէ: Ինչն ալ կը
խմէ զայն: Բայց թոյնը թոյն չէր: Վաչտակ
կապակածներ ունենալով, հետամտած էր նա-
խկին, անոր գէշ գործը տեսած էր. անմի-
ջապէս անմիտ հեղուկ մը պատրաստելով
զայն թոյնի սրտակէտ տեղը կը դնէ, ուստի
և քոյրը չի թունաւորուիր: Երբ առաւել քոյր
ու եղբայր իրար կը գտնեն, Արփենիկ որ
ինքզինքը մահուան մօտ կը կարծէ, իր ինք-
նաթաշտաւորումը Վաչտակին կիմանցնէ: Բայց
սրտակէտներ փոփոխման խնդիրը չուտով մը
յայտնուի, ու անոր հետ մէկտեղ՝ գլուխ կը
ալ: Վաչտակ սպաննած է այն նախկինը, որ
իր քոյրը հրամանին հնազանդելով թոյնը
պատրաստած էր, և խեղճ աղջկան գլուխը

ԲԱՆԱԿԱՆ ՏԵՄԱԿԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ

Վենետիկ, յուլիսի 26-ին

«ՏՈՒՐԿԻՆ» ՎԵՂԸ

Ա.

Նախորդ յօդուածով ընդհանուր տեսութիւն
մը պարզեցի մեր գրականութեան մէջ եկե-
ղեցական վիպագիրներու երեման առթիւ: Հ.
Երեմանին «Տուրկին» ազգայնական ինքի պա-
տկութիւն կը հայթայթէ գործնականապէս
ալ ցոյց տալ, ինչ որ տեսականապէս քսած էր:
Գինադատի մը պաշտօնովը չեմ ներկայանար,
ինչպէս պիտի չը ներկայանամ ուրիշ պա-
րագրերու ալ, երբ Թիւրքիոյ հայոց վիպա-
կան գործերուն վրա խօսիմ: Կուգամ իբր
պարզ ընթերցող մը հանրութեան հաղորդել
վէպի մը ինքի ազգած հանգրիւն կամ տհաճոյ-
քին «Բնիկ»-ն:

«Տուրկին»-ի նիւթը մեր հին պատմութենէն
է, Արտաշէս Բ-ի օրով, յետ մահուան Երուսաղեմ
Բ-ի, Իկաքերը տեղի կունենան Երուսաղեմի
փերը: Արտաշէս Երուսաղեմի, այն պա-
հուն, երբ Արտաշէս Բաղարանէն Արտաշատ կը
փոխադրէ: Արտաշէսի պատկերը և հայրենի ա-
մէն կուռքերը:

Երուսաղեմ Բ. իրեն մտերիմ բարեկամ Տուրք
սպաննել տուած է: արքունական գաղափե-
ները Արտաշէս Բ.-ին հաղորդած ըլլալու ամ-
բաստանութեամբ: Երբ Երուսաղեմի կը
նուաճի ու Երուսաղեմ ալ կը սպաննուի, Արտա-
շէս Տուրկին գաւկեցիներ նախարարութեան բարձ-
րացնելով կը պատուէ ու կը վարձատրէ: ա-
նոց հօրմէն ընդունած ծառայութեանցը իր
փոխարինութիւն:

Տուրք բազմաթիւ գաւակներ թողած է, ու-
րոնցմէ երեքը դեռ պղտիկ են, հինգը՝ միշտ
որսորդութեամբ կը պարապին, անտառները
ու լեռները թափառայած. իսկ երկուքը՝ խե-

լացի ու քաջ երիտասարդներ՝ նախարարու-
թեան ժառանգորդներն են: Բայց այս վերջին-
ներս անբնութագրեր են. ոչ ոք գիտէ անոնց
հըր, ինչ ըլլանին իրենց մայրը համոզուած է
թէ Երուսաղեմ չըլլակայները թափառող աւա-
զակներէն սպաննուած են:

Ամուսնի և զուգի այս կրկնակ սպաննու-
թիւնները վէպին նիւթը կը կազմեն: Տուրկին
նախարարութիւն Տուրկին՝ կորցել իր սիրելի-
ներուն մահուան վրէժը իր ձեռքովը լուծելը
Արտաշէսի դղեակէն գաղտնի կը մնին: Կեր-
թայ Երուսաղեմ չըլլակայները քաղաքի մը մէջ
կը սպաննէ քանի մը աւազակներ, իբր վրի-
ժառութեան իր երկու զուգիներուն մահուանը:
Բայց հետոյ այդ միտած գաւակները մէջտեղ
կենցին, ու կը յայտնուի թէ քաղաքին մէջ
Տուրկինի մեռնոցած աւազակները անմեղ
որսորդներ են եղել, որոնց երկուքն ալ նոյն
իսկ Տուրկինի որսորդ գաւակները:

Տուրկին յետոյ Բաղարան կերթայ, և մեհե-
նին մէջ իր ձեռքովը կը սպաննէ գանձապե-
տը: Երբ Տուրկին գահին է եղած: Ու մար-
դասպանութիւն տաճարէն դուրս կըլլէ, անմը-
տանգ, առօր փառքը: Ժողովուրդը գանձա-
պետին թշնամի է, ուստի անոր ահաբեկչին
չի դպչիր: Իսկ Արտաշէս, որ կուռքերուն փո-
խադրութեանը առթիւ Բաղարան կը գտնուէր,
ներողամիտ է Տուրկինին, որուն ամուսինը
իրեն շատ ծառայութիւն մատուցած է, և այն
պատճառաւ ալ սպաննուած:

Այս դէպքը եօթ գլխի մէջ կը պատմուի.
անոնցմէ իւրաքանչիւրը առանձինն գրուած
մըն է: Ժամանակագրութեան ամէն մէկը:

Առաջին գլուխը մեղի Արաքս գետը կը փո-
խադրէ: Բազմաթիւ հայեր աղախատելով կը
նաւեն, գուսաններ ու զինուորներ իրենց ու-
ղելիք են: Անոնք կերթան Արտաշատ շրջա-
կայները՝ «նոյն կողմերը» Արաքսի ձախճախու-
ած փոխադրուած մշակելու և անտառներ տնկելու:
Ապա արտադրուած կէս գինի է. գետային կարտ-
ւանը ահ ու դողի մէջ է, երբ անդադային կիր-
մելէ կանցնի: Աւազակները յոռախ շատ լաւ-
տեր ընկղմած են չըլլակայ բարձունքներէն
Բայց ղինուորին այս անհարկի վարմունքէն

